

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №1-2 (34-35) 2018 Гуманитарные науки

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԿԱ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԴԱԼԼԱՔՅԱՆ Ս.Ա.

Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական
համալսարան, 0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: svetdal@mail.ru

Հոդվածում ներկայացված է փոքր և միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) առկա իրավիճակը, խոչընդոտները և հեռանկարները: Մասնավորապես անդրադարձ է կատարվել ակտիվ հարկատու ՓՄՁ-ների քանակի դինամիկային 2015-2017թթ.-ին, ինչպես նաև դրանց նշանակալից դերին համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում: Հոդվածում քննարկվել են ՀՀ «Գործարարությամբ զբաղվելը 2018» զեկույցի ցուցանիշները, մասնավորապես «Գործարարություն իրականացնելու դյուրինություն» ցուցանիշը: Վերջինս վերլուծվել է նաև Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրների շրջանակներում: Վերլուծված ցուցանիշների հիման վրա՝ առաջարկվել են մի շարք միջոցառումներ ՓՄՁ գործունեությունը խթանելու նպատակով:

Բանալի բառեր. փոքր և միջին ձեռներեցություն, մրցակցային առավելություն, պետական սուբսիդավորում, գործարարություն իրականացնելու դյուրինություն, լիզինգ, ֆինանսական շուկա:


Ներկայացվել է խմբագրություն: 11.06.2018

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում գործող փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման դինամիկան և նրա ազդեցությունը յուրաքանչյուր երկրի հասարակական և տնտեսական խնդիրների լուծմանն ուղղված նպատակների կազմավորման գործում պահանջում են պետության կողմից շարունակական վերահսկում և վերջինիս գործունեության վրա ազդող բազմաթիվ գործոնների վերլուծություն:

Ինչպես հայտնի է ՓՄՁ ոլորտի համաշխարհային փորձի ուսումնասիրություններից, ներկայումս ձեռնարկությունների 90% կազմում են ՓՄՁ սուբյեկտները: Ձեռնարկատիրությունը ոչ միայն գործարարության ոլորտի ձև է, այլ նաև մտածողության և ապրելակերպի դրսևորում՝ տնտեսական դաշտում գործունեություն ծավալել ցանկացող յուրաքանչյուր մարդու համար: Իր տեսակի մեջ, այն համատեղում է պետության, հասարակության, սեփականության և սոցիալական շահերը, որոնք իրականացվում են մի շարք գործոնների փոխներգործության շնորհիվ: Միջազգային հեղինակավոր կառույցները ժամանակ առ ժամանակ իրականացնում են հետազոտություններ՝ աղքատության կրճատմանը նպաստելու ուղիների հայտնաբերման և աշխարհում ներկա իրավիճակի վերլուծման նպատակով, որի արդյունքները ցույց են տալիս, որ աղքատությունից խուսափելու


առավել արդյունավետ միջոց է հանդիսանում սեփական գործի նախաձեռնումը: ՓՄՁ ոլորտը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: ՀՀ կառավարության կողմից շարունակական քայլեր են իրականացվում ոլորտի զարգացման, մասնավորապես՝ ՓՄՁ պետական աջակցության համակարգի զարգացման ուղղությամբ [1]: ՓՄՁ-ները մեծ դերակատարություն ունեն ինչպես ՀՆԱ-ի ձևավորման, այնպես էլ զբաղվածության և հարկային մուտքերի ապահովման, սոցիալական լարվածության նվազեցման գործում:

Խնդրի դրվածքը և մեթոդիկայի հիմնավորումը: Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել ՓՄՁ առկա իրավիճակը և դրանց ներազդեցությունը ՀՆԱ-ի վրա: 2016թ. ՀՀ-ում առկա էր 101003 գրանցված հարկատու ՓՄՁ, որից ակտիվ հարկատու են 69997-ը, որը կազմում է ընդամենի 76%-ը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1: Գրանցված ակտիվ հարկ վճարողների թվաքանակը, հազ մարդ [9, էջ 5]:

Ինչպես նկատում ենք գծապատկեր 1-ից, 2016թ-ին 2015-ի համեմատ ակտիվ հարկատու ՓՄՁ-ներն ավելացել են 1161-ով: Միևնույն ժամանակ ՓՄՁ-ն նշանակալի դեր է խաղում երկրի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ձևավորման գործում: Ըստ 2016 թվականի տվյալների՝ ՓՄՁ-ի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում կազմել է 33.1% (գծապատկեր 2):




Գծապատկեր 2: ՀՆԱ-ի կազմում ՓՄՁ-ի մասնաբաժինը, (%) [9, էջ 6]:

Ըստ նշված գծապատկերի երևում է, որ 2014թ-ի համեմատությամբ 2016 թվականին դրական տեղաշարժ է նկատվել: Հետևաբար պետք է նշել, որ 2016թ-ին ՓՄՁ կողմից ստեղծվել է 238311 աշխատատեղ, որը ողջ աշխատաշուկայում ստեղծված աշխատատեղերի 64.3%-ն է կազմում [9, էջ 6]:

Հիմք ընդունելով այն փաստը, որ ՓՄՁ ապահովում է ՀՀ ՀՆԱ-ի 1/3-ը, և հանդիսանում է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ կառավարությունը շարունակական քայլեր է իրականացնում ՓՄՁ ոլորտի

զարգացման, մասնավորապես դրանց պետական աջակցության համակարգի զարգացման ուղղությամբ: Եթե նախորդ տարիներին ոլորտի զարգացման քաղաքականությունն ավելի շատ կենտրոնացած էր ՓՄՁ սուբյեկտների քանակական աճի և ռեսուրսների հասանելիության վրա, ապա առաջիկա տարիներին շեշտը դրվելու է գիտելիքի, որակի, ՓՄՁ սուբյեկտների և ընդհանրապես ոլորտի մրցունակության բարձրացման վրա: Առաջիկա տարիներին ՓՄՁ-ների զարգացման քաղաքականության գլխավոր նպատակը ներքին և միջազգային շուկաներում մրցունակ ՓՄՁ սուբյեկտների գործունեության ապահովումն է՝ կազմակերպությունների զարգացման ու ձեռնարկատիրական գիտելիքի տարածման, ֆինանսական միջոցների հասանելիության, հարկային համակարգի պարզեցման և մասնավոր հատվածի հետ երկխոսության մեխանիզմների կատարելագործման, ինչպես նաև նորարարությունների ու կայուն զարգացման խթանման միջոցով: Գործարար միջավայրի հորիզոնական բարեփոխումները շարունակում են հանդիսանալ ամենանշանակալի արդյունքներ ապահովող ուղղությունը: ՓՄՁ ոլորտի զարգացման վրա իր ազդեցությունն է թողնում նաև Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցի ցուցանիշների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը, որոնցից առավելապես և անմիջականորեն ազդեցություն են կրում ՓՄՁ սուբյեկտները՝ պայմանավորված իրենց առանձնահատկություններով և գործարար միջավայրի պայմանների նկատմամբ զգայունությամբ:

Հետազոտության արդյունքները կայանում են նրանում, որ «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցը գնահատում է այն կարգավորումները, որոնք ուղղակիորեն ազդում են գործարար միջավայրի վրա, այդ թվում՝ ՓՄՁ ոլորտի վրա՝ հնարավորություն տալով իրականացնել միջերկրային համեմատություններ հետազոտված 190 երկրների միջև 10 ոլորտներում իրեն համապատասխան ցուցանիշներով, ինչպես նաև զեկույցում արտացոլված է յուրաքանչյուր երկրի վարկանշային մակարդակը: Որքան ցուցանիշը և վականիշը մոտ են 0-ին, այնքան և վարկանիշի ու ցուցանիշի առումով տվյալ երկիրը ավելի բարվոք վիճակում է գտնվում (գծապատկեր 3):



Գծապատկեր 3: Հայաստանի Հանրապետության «Գործարարությամբ զբաղվելու» «Doing business» զեկույցի ցուցանիշները 2016-2018թթ. [9]:

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, Հայաստանը հետընթաց է արձանագրել, բացի Էներգետիկ համակարգին միանալու հնարավորության (Getting Electricity) ցուցանիշից, ինչպես նաև գույքի (սեփականության) գրանցում (Registering Property) ցուցանիշը մնացել է հաստատուն: Նշված զեկույցում առկա է մի առանձնահատուկ և ուշագրավ ցուցանիշ՝ «սահմանագծից հեռավորության» ցուցանիշը, որը գնահատում է երկրի կանոնակարգման աշխատանքների բացարձակ մակարդակը 0-ից 100 սանդղակով:

Հայաստանի միավորը «Գործարարությամբ զբաղվելու 2017» զեկույցի 71.92-ի համեմատ «Գործարարությամբ զբաղվելու 2018» զեկույցում դարձել է 72.51[9]: Երկիրն իրապես շարունակում է փոքրացնել համաշխարհային կարգավորման սահմանագծից հեռավորությունը, ինչը դրական զարգացում է: Մասնավորապես, ըստ «Գործարարությամբ զբաղվելու» զեկույցի եզրահանգման, Հայաստանը 2016/17 թթ. զգալի փոփոխություններ է իրականացրել կարգավորման տեղական դաշտում: Սակայն կա ժամանակային անջրպեղ բարեփոխում կատարելու պահից մինչ բիզնեսում ակնհայտ արտացոլումը, ինչի հետևանքով համաշխարհային զեկույցում ցուցանիշների առումով չեն երևում արդյունքներ, որոնք կարտացոլվեն հաջորդ տարվա զեկույցում: Շարունակական բարեփոխումների իրականացման արդյունքում Հայաստանը որոշ ցուցանիշների գծով գրանցել է առաջընթաց, ինչն իր դրական ազդեցությունն է ունեցել նաև ՓՄՁ ոլորտի տնտեսվարող սուբյեկտների վրա, մասնավորապես.

- դյուրացվել է էլեկտրաէներգիայի ստացումը՝ միացման ընթացակարգերի համար պարտադրելով նոր ժամկետներ և կոմունալ ընկերությունում ներդնելով աշխարհագրական տեղեկությունների նոր համակարգ [5, էջ 64],

- դյուրացվել է գույքի գրանցումը՝ բարելավելով հողերի կառավարման համակարգի վեճերի կարգավորման մեխանիզմները [5, էջ 66],

- ներդրվել է էլեկտրոնային գնումների համակարգ

- մշակվել է «օտարերկրյա ուղղակի ներդրումների մասին» օրենքի նախագիծ:

Նշված բոլոր բարեփոխումներին զուգահեռ առկա է վարկավորման դյուրինության բացակայություն, որը հավաստում է «Գործարարությամբ զբաղվելու» զեկույցի տվյալները: «Վարկերի ստացման մատչելիություն» ցուցանիշը, որը մեզ հետաքրքրում է առավելագույնս, 2016թ.-ի զեկույցում 42-րդն էր, 2017թ.-ին՝ 20, իսկ 2018թ.ի զեկույցում կրկին՝ 42:

Ներկայացնենք նաև ՀՀ դիրքը «Գործարարություն իրականացնելու դյուրինություն» ցուցանիշով ԵԱՏՄ շրջանակներում (աղյուսակ 1):

**ԵԱՏՄ երկրների վարկանիշը ըստ «Գործարարությամբ զբաղվելու»
գեկույցի 2016-2018թթ..[3 էջ 177-120; 4, էջ 144-187]**

ԵԱՏՄ երկրներ	«Գործարարություն իրականացնելու դյուրինություն» ինդեքս «Doing bussines» rate			«Վարկերի ստացման մատչելիություն» ցուցանիշ Getting credit(rank)		
	2016	2017	2018	2016	2017	2018
Հայաստանի Հանրապետություն	43	38	47	42	20	42
Բելարուսի Հանրապետություն	50	37	38	109	101	90
Ղազախստանի Հանրապետություն	51	35	36	70	75	77
Ղրղզստանի Հանրապետություն	73	75	77	29	32	29
Ռուսաստանի Դաշնություն	36	40	35	42	44	29

Ներկայացված աղյուսակում դիտարկել ենք ԵԱՏՄ երկրների շրջանակը: Ինչպես նկատում ենք աղյուսակ 1-ից «Գործարարություն իրականացնելու դյուրինություն» ցուցանիշով ՀՀ հուսադրող դիրքում չի գտնվում ՌԴ (35), Ղազախստանի (36) և Բելառուսի (38) համեմատությամբ, քանի որ Հայաստանը գործարարությամբ զբաղվելու դյուրինության առումով զբաղեցնում է 47-րդ տեղը՝ նախորդ տարվա 38-րդ տեղի համեմատ [3, 5 էջ 120,177]:

Անհրաժեշտ է նշել, որ բացի «Գործարարությամբ զբաղվելու» վարկանիշից առկա է նաև Համաշխարհային տնտեսական ֆորումի գլոբալ մրցունակության ինդեքսը (Global Competitiveness Index): Հայաստանը 2016-2017թ-ի գտվել է 79 տեղում [7, էջ 23], բարելավելով իրավիճակը 2017-2018թթ, զբաղեցնում է 73-րդ տեղը [8, էջ 24]: Ինդեքսի բարելավման գործընթացին նպաստել են մասնավորապես գործարարության կատարելագործվածությունը, նորարարությունը և ֆինանսական շուկայի զարգացվածությունը՝ համապատասխանաբար 13, 17, 12 նիշերով [2, էջ 9]:

Հոդվածի վերլուծական մասը կատարվել է թեմային առնչվող վիճակագրական տվյալների, մասնագիտական ժողովածուների և նյութերի, միջազգային հոդվածների և հաշվետվությունների հիման վրա: Հոդվածում կիրառվել են տնտեսավիճակագրական և գծապատկերային, գործոնային և համեմատական վերլուծության մեթոդներ, որոնք հնարավորություն են տվել բացահայտել և ներկայացնել ՓՄՁ առկա իրավիճակը բնութագրող ցուցանիշներն ու խոչընդոտները, ինչպես նաև կատարել համապատասխան եզրահանգումներ և առաջարկություններ: Ներկայացնելով ՀՀ ՓՄՁ անհրաժեշտությունն ու դինամիկ զարգացումը, ինչպես նաև տնտեսության մեջ նրա դերը և ընդհանրապես գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանը՝ փորձենք առանձնացնել առկա խոչընդոտները, որոնք կանխարգելում են ՓՄՁ-ի կատարելագործման գործընթացը: Մեր կարծիքով, առկա են հետևյալ հիմնական խոչընդոտները.

- բիզնեսի վարման կարողության բացակայությունը,

- մաքսային և հարկային վճարների ու ընթացակարգերի ոչ մատչելիությունը,
- մրցակցային միջավայրի բացակայությունը,
- ֆինանսական միջոցների անհասանելիությունը,
- հարկային արտոնությունների բացակայությունը,
- սահմանափակ պետական աջակցությունը,
- պետական գնումների հետ կապված խնդիրները,
- իրավական պաշտպանության բացակայությունը,
- օրենքների կարգավորումների կանխատեսելիության բացակայությունը,
- բիզնեսի համար նպաստավոր քաղաքականության բացակայությունը:

Անհրաժեշտ է նշել, որ Համաշխարհային բանկը պարզել է, որ ձեռնարկատերերը և ներդրողները, ուշադրությունը սևեռում են հենց այս վերջին երեք կետերի վրա: Բիզնեսի համար կարևոր է համոզված լինել, որ մտնելով ներքին ու արտաքին շուկաներ՝ կլինի մրցունակ, աճի համար կունենա ֆինանսներ, կօգտվի նաև նորարարական տեխնոլոգիաներից ու հմտություններից. այս ուղղությունները փոխադարձորեն կապված են մեկը մյուսի հետ և Հայաստանն այս առումով բավականին մեծ ներուժ ունի:

Կարծում ենք, որ ՓՄՁ ոլորտում ֆինանսական խնդիրների լուծման և երկրի արտահանման գործառնություններում փոքր ու միջին բիզնեսի դերի ակտիվացման, ինչպես նաև միջազգային շուկայում իր արտադրանքի մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ է.

1. Իրականացնել բարելավում ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման ծրագրի կատարման գործընթացների ուղղությամբ, որի նպատակն է խթանել Հայաստանում ՓՄՁ վարկային ներդրումների ծավալը վարկատուների համար վարկավորման գնի նվազման միջոցով:
2. Ցանկալի է պետության կողմից սուբսիդավորվող վարկերի տեսակարար կշռի ավելացումը, քանի որ վերջիններս ավելի սահմանափակ են, քան դրանց իրական պահանջարկը տնտեսավարողների կողմից:
3. ՓՄՁ ոլորտ ներգրավել աշխատանքային միգրանտներին նրանց դրամական կապիտալի տեսանկյունից՝ տալով նրանց պետական դրամաշնորհներ այնքան, որքան նրանք բիզնես ներդրում կկատարեն՝ հայրենիքում ձեռներեցություն հիմնելու նպատակով («1+1» սկզբունքով):
4. Պետական երաշխիք կամ կանխավճարի տրամադրում այն նորաստեղծ ընկերություններին, որոնք առաջարկում են միջազգային շուկայում մրցունակ արտադրանքի արտադրություն:
5. Կազմակերպել ՓՄՁ սուբյեկտների միջազգայնացմանն ուղղված հետազա քայլեր, մասնավորապես.
 - 5.1. ակտիվացնել ՓՄՁ սուբյեկտների արտադրանքի միջազգայնորեն ընդունված ստանդարտներին համապատասխանեցնելու գործողությունները,
 - 5.2. արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ-ների բացահայտում և նրանց կարողությունների հզորացում,
 - 5.3. ՓՄՁ սուբյեկտների համար երաշխավորել անխափան լոգիստիկ պայմաններ օտարերկրյա շուկաներ մտնելու գործում:
6. Առավել ակտիվ լինել գլոբալ արժեքի շղթաներին ՓՄՁ սուբյեկտների ինտեգրումը խրախուսելու գործում, օրինակ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՆՆ) և ՓՄՁ-ներ կապերի դյուրացման միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ

արձանագրվել է ՕՈԻՆ-երի ցածր մակարդակ, մասնավորապես 2016թ.-ի առկա է եղել 338 մլն ԱՄՆ դոլար ՕՈԻՆ-երի զուտ ներհոսք, իսկ 2017թ.-ի 1-ին կիսամյակում 75-85 մլն ԱՄՆ դոլար[2, էջ 19]:

7. Մշակել և ներկայացնել ՀՀ-ում «բիզնես հաշտարարի» ինստիտուտի հայեցակարգային մոտեցումը, որը կարող է հիմք ծառայել ՓՄՁ-ների ակտիվացման համար՝ մասնավորապես ապահովելու ձեռներեցների շահերի պաշտպանություն և օժանդակություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռազմավարություն «Փոքր եվ միջին ձեռնարկատիրության զարգացման 2016-2018 թվականներ», ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 1-ի նիստի N 44 արձանագրային որոշում, հ. 1
2. Հայաստանի մրցունակությունը և տնտեսության ընթացիկ վիճակը, Ի-Վի Քոնսալթինգ 2017, 20 էջ
3. Евразийская экономическая комиссия Аналитический доклад «Экономическое развитие Евразийского экономического союза и государств-членов в 2016 году: международные рейтинги», - Москва 2016 г.-189 с.
4. Doing business 2018, Reforming to creat jobs, Economy profile armenia, 67 p.
5. Doing business 2015, Reforming to creat jobs, Economy profile armenia, 67 p.
6. The Global Competitiveness Report 2016–2017, 400p.
7. The Global Competitiveness Report 2017–2018, 393 p.
8. Reasearch on SME taxation field 2016, EBRD Business support office, Erevan 2017, 15p.
9. <http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia>

РЕЗЮМЕ

МАЛОЕ И СРЕДНЕЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВО, ТЕКУЩИЕ ПРЕПЯТСТВИЯ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В АРМЕНИИ.

ДАЛЛАКЯН С. А.

В статье представлена ситуация, препятствия и перспективы развития малое и среднее предпринимательство (МСП). Рассмотрена динамика числа активных налогоплательщиков МСП в 2014-2016 годах, а также важная роль МСП в формировании валовой внутренней продукт (ВВП). Проанализированы показатели отчета "Ведение бизнеса-2018", в частности, рейтинг "Ведение бизнеса", который проанализирован и в рамках стран Евразийский экономический союз (ЕАЭС). Учитывая отмеченные в работе препятствия и результаты анализа показателей, предложен ряд мер по стимулированию деятельности МСП.

SUMMARY

SMALL AND MEDIUM ENTREPRENEURSHIP, CURRENT OBSTACLES AND PROSPECTIVE DEVELOPMENT IN ARMENIA

DALLAKYAN S. A.

The current situation, obstacles and perspectives of SMEs are included in the article. In particular, it was discussed upon the dynamics of the number of active taxpayer SMEs in 2014-2016, as well as the SMEs' contribution to GDP. The indicators of the "Doing Business 2018" report, in particular the "Ease of Doing Business" index were analysed in the article. The last index was also analysed in Eurasian Economic Union. Taking into account mentioned obstacles and analysed indicators, some steps were offered to boost business of SMEs.